



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ**

**Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն    Հ Ե Տ Ա Ձ  
Ո Տ Ա Կ Ա Ն  
Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք**

*Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես  
մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և  
դաստիարակությունը դպրոցում*

*Առարկան՝ Ֆիզիկա*

*Հետազոտող ուսուցիչ՝ Գրիգորյան Անետա*

*Ուսումնական հաստատություն՝ №179 հիմնական դպրոց*

**Երևան 2022**

# Հարց-Ինչպիսի՞ քնապահպանական հիմնախնդիր է լուծում կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

## Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1 Բնապահպանական դաստիարակությունը դպրոցում	
1.1 Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր.....	4
1.2 Բնապահպանական կրթություն.....	7
1.3 Բնապահպանական կրթության բովանդակությունը դպրոցում.....	8
1.4 Բնապահպանական կրթության ծրագրի կառուցման սկզբունքներն ու կառուցվածքը.....	9
Եզրակացություն.....	16
Գրականության ցանկ.....	17

## Ներածություն

Թեմայի արդիականությունը: Մարդն իր առաջացման օրվանից առնչվում ու փոխհարաբերակցվում է բնության հետ՝ այս կամ այն կերպ օգտագործելով բնությունն իր կարիքները հոգալու և կենսագործունեությունն ապահովելու համար և որոշակիորեն ազդելով բնության վրա: Սակայն մարդկության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ՝ մարդու գործունեության ազդեցությունը բնության վրա սկսեց աստիճանաբար բացասական բնույթ կրել, նա փոխեց նաև վերաբերմունքը բնության նկատմամբ՝ օգտագործելով այն անգրագետ ու առանց նորմերը պահպանելու, փորձելով ենթարկել իրեն: Բնապահպանական կրթությունը ոչ միայն գիտելիքների ձևավորում է, այլև գործնական կարողությունների զարգացում, իսկ ամենալավ միջոցը գործնական աշխատանքների կատարումն է: Սովորողները պետք է հիմնական դպրոցից ծանոթ լինեն էկոլոգիական խնդիրների հետ, փորձեն լուծել այնպիսի հիմնահարցեր, որոնք վերաբերվում է իրենց շրջապատին:

Շատ դպրոցներ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին նվիրված ուսուցում իրականացնելու հարցում, սակայն դժվարանում են ստեղծել ուսումնական ծրագրեր և նյութեր: Այս ամենով էլ թեման արդիական է:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում:

Աշխատանքի խնդիրներն են՝

- ներկայացնել բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր,

- ուսումնասիրել բնապահպանական կրթությունը և բովանդակությունը դպրոցում,
- ներկայացնել բնապահպանական կրթության ծրագրի կառուցվածքը:

Աշխատանքը կազմված է ներածությունից, մեկ գլխից, համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը ներկայացված է 17 էջ համակարգչային շարվածքով:

## **Գլուխ 1 Բնապահպանական դաստիարակությունը դպրոցում**

### **1.1 Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր**

Ներկայումս մարդկության առջև ծառայած ամենաբարդ և ամենակարևոր համաերկրային հիմնախնդիրը բնության և հասարակության դինամիկ հավասարակշռության պահպանությունն է:

Կենսոլորտի զարգացման պատմության ընթացքում երբեք բնությունը չի ենթարկվել այսպիսի անողորմ հարձակման, ինչպես վերջին հիսնամյակում: Բնական համալիրների քայքայումը հանգեցրեց բուսական, կենդանական, սնկերի, մանրէների տեսակների ոչնչացմանը, որը աղետալի չափերի է հասել նաև մեր հանրապետությունում:

Բնության և հասարակության բարդ փոխհարաբերությունների ներկա էտապում բնության պահպանության, բնական հարստությունների օգտագործման հարցը մղվում է առաջնահերթ պլան և դառնում է ազգային և միջպետական հարաբերությունների գլխավոր խնդիրը, որի հաջող լուծումը պահանջում է ոչ միայն տվյալ բնագավառի բարձր մակարդակի մասնագետների պատրաստում այլև ազգաբնակչության բոլոր շերտերի էկոլոգիական և բնապահպանական գիտելիքների կտրուկ բարձրացում:<sup>1</sup>

Այսօր մենք ապրում ենք «փոքր տիեզերքի մեծ մոլորակում», որտեղ տնտեսությունը բացառիկ ճնշում է գործադրում Երկիր մոլորակի վրա. չկա ազատ ոչ մի բնական ռեսուրս: Ամենը՝ ներառյալ կենսաբազմազանությունը, քաղցրահամ ջրերը, մթնոլորտը, օվկիանոսները, անտառները, սառցե ժայռերը և այլն, անմիջական

<sup>1</sup> Մելքունյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ, Երևան 2010, էջ 6:

դեր ունեն Երկիր մոլորակի և, հետևաբար, համաշխարհային տնտեսության կայուն զարգացման գործում: Մտահոգությունն այն է, որ ներկայիս տնտեսական համակարգը մշակվել է Ա. Սմիթից մինչև Ջ. Քեյնսի ժամանակաշրջանում, երբ մենք «փոքր մոլորակ էինք, մեծ տիեզերքի մեջ», երբ համաշխարհային տնտեսության՝ մոլորակի վրա ազդելու գաղափարը ծիծաղելի էր: Այն ժամանակ կարող էինք աղտոտել մթնոլորտը, դատարկել օվկիանոսները և այլն, պատկերացում չունենալով, որ Երկիր մոլորակը դրան ի պատասխան կարող է չափազանց դաժան գտնվել:

Բայց այսօր ամեն բան այլ է: Մարդկանց կողմից բնության անխնա և անխիղճ օգտագործման առաջին պատասխան ազդակները նկատվել են դեռևս 1980-ական թթ.-ին (օզոնի շերտի բարակում, ջերմային ալիքների տեղաշարժ, փոթորիկների ակտիվացում, սառույցների հալման արագացում, քաղցրահամ ջրերի պակաս և այլն): Ներկայումս տնտեսական աճն ուղեկցվում է սահմանափակ բնական ռեսուրսների անխնա օգտագործմամբ, և որպես արդյունք՝ բնական աղետի ռիսկի աճով: Տնտեսագետներն իրականում ի վիճակի չեն ճիշտ գնահատել բնությանը հասցված վնասները: Ուստի բնությունը արժևորելու համար մենք պետք է փոքր-ինչ հեռանանք տնտեսագիտությունից: Շատ հին հավատք կա, որ շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները հնարավոր է լուծել նախապես անհրաժեշտ տնտեսական միջոցներ կուտակելուց հետո միայն: Այսինքն՝ բավարար ֆինանսական միջոցների առկայության դեպքում միայն մենք կարող ենք մեզ թույլ տալ փրկել բնությունը: Այսպիսի մտածելակերպը երբեք ճիշտ չի եղել և այն պետք է ընդմիջտ մերժվի, եթե մեզ լրջորեն հետաքրքրում է Երկիր մոլորակի վրա բարգավաճող մարդկություն ունենալու նախապայմանով տնտեսական զարգացումը: Ճշմարտությունն այն է, որ հասարակությունը շնորհակալ պետք է լինի բնությանը, որ դեռևս չկան շատ վտանգավոր կլիմայական փոփոխություններ: Ընդ որում՝ աղքատ երկրներում ապրող հասարակությունը պատասխանատվություն է կրում ավելի քիչ արտանետումների համար: Սակայն ինչպես հայտնի է, տնտեսական աճից ամենաքիչն օգտվում են աղքատ երկրները: Անարդարությունը սրվում է, երբ հարստության կուտակման գործընթացը տեղի է ունենում հարուստ երկրների կողմից բնությունից անխնա «սուբսիդավորման» շնորհիվ, իսկ այդպիսի «սուբսիդիաների» համար վճարում են ուրիշները՝ հատկապես ամենաաղքատ

երկրները:

Ձեռնարկատիրական գործունեության խթանման և արտադրողականության աճի համար ազատ շուկայական տնտեսությունը պետք է գործի կայուն տնտեսական համակարգում: Բայց գլոբալ ռիսկերը չափազանց բարձր են, այդ կայունությունն ապահովելու համար: Ավելին՝ համաշխարհային կայուն զարգացմանն անցնելու առավելությունները շատ հաճախ անտեսվում են գրեթե բոլոր պետությունների կողմից: Բայց հաջողության հասնելու համար պետք է սահմանել տնտեսության զարգացման որոշակի սահմանափակումներ. համաշխարհային տնտեսության կայուն զարգացումը դիտարկելով սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների լուծման համատեքստում: Սա տնտեսական աճը խոչընդոտող պայման չէ, այլ ավելի նորարարական, «առողջ», բարգավաճող տնտեսություն ունենալու նախապայման: Անկայուն կլիմայական պայմանները, եղանակային էքստրեմալ դրսևորումները, ապագայում ջրի սակավության հիմնախնդիրները Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից դիտարկվում են բիզնեսի համար առաջնային ռիսկերի ցանկում: Հետևաբար՝ և՛ կառավարության, և՛ բիզնեսի առջև դժվարին խնդիր է դրվում տնտեսական աճը հավասարակշռել էկոլոգիական կայուն զարգացման հետ: Յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ հնարավոր չէ մարդկության համար կառուցել կայուն, բարգավաճող և արդար ապագա քանդված և ավերված մոլորակի վրա, հատկապես երբ կանխատեսվում է, որ առաջիկա երեք տասնամյակների ընթացքում երկրի բնակչությունը հասնելու է 10 միլիարդի:

Տնտեսական առումով ՀՀ-ի բնաշխարհը և բնական պաշարները՝ ընդերքը, հողը, ջուրը, օդը, բուսական, կենդանական և այլն, նրա ժողովրդի հարստությունն ու սեփականությունն են, ընդ որում՝ ոչ միայն ներկայիս ՀՀ քաղաքացիների, այլև նրանց սերունդների, որոնք հնարավոր է՝ նոր մոտեցումներ որդեգրեն իրենց սեփականությունը տնօրինելու հարցում: Ուստի բնությանը և բնական պաշարներին վերաբերող յուրաքանչյուր հարցում անհրաժեշտ է ելնել այն կանխավարկածից, որ «շրջակա միջավայրը մենք ոչ թե նվեր ենք ստացել մեր ծնողներից, այլ պարտքով վերցրել ենք մեր զավակներից»: Ուստի բնական պաշարների օգտագործման հարցում հարկավոր է առաջնորդվել գալիք սերունդներին պատկանող սեփականությունը

չյուրացնելու, այն օգտագործումից նրանց համար ապագայի լավ պայմաններ ստեղծելու սկզբունքներով:<sup>2</sup>

## 1.2 Բնապահպանական կրթություն

Դժվար է գերազնահատել բնապահպանական կրթության (ԲԿ) դերը ժամանակակից կրթության մեջ: Բնապահպանության անհրաժեշտության մասին մարդիկ, հատկապես կենսաբան գիտնականները լրջորեն սկսեցին խոսել 20-րդ դարի սկզբից, թեև Ժան Բատիստ Լամարկը իր հանրահայտ խոսքերն<sup>1</sup> ասել էր դեռ 1820 թվականին: Երկար ժամանակ չէր անհրաժեշտ՝ հասկանալու համար, որ բնությունը պահպանելու կարևոր պայմանն է բնության նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխությունը: Մարդկանց անհրաժեշտ էր/է «բնության տիրակալը» լինելու և այն անհագուրդ շահագործելու վարքից անցնել բնության մի մասնիկը լինելու ըմբռնմանը:<sup>3</sup>

20-րդ դարի երկրորդ կեսը կարելի է համարել ինչպես բնության արագընթաց քայքայման, այնպես էլ բնապահպանական կրթության ամենակտիվ քարոզչության ժամանակաշրջան: Մեզ լավ հայտնի են բնական համակարգերի քայքայումը ծնող պատճառները, որոնց թվում առաջնային էին մարդկության թվաքանակի գերարագ աճը, գիտության և արդյունաբերության աննախադեպ առաջընթացը, բնական ռեսուրսների ահռելի չափերի հասնող շահագործումը: Ավելի հարմարավետ և հարուստ ապրելու մարդկության ձգտումը շատ արագ հասցրեց մի իրավիճակի, երբ մարդկային հասարակությունը հանգեց բնությունը պահպանելու, պաշտպանելու առաջնահերթության գաղափարին, որն էլ իր հերթին հանգեցրեց բնապահպանական կրթության անհրաժեշտության ընկալմանը:

20-րդ դարի երկրորդ կեսին իրար հաջորդեցին մի շարք միջազգային կոնֆերանսներ, որոնք փորձում էին հստակեցնել ԲԿ դերը ժամանակակից

<sup>2</sup> <https://www.hamakarg.am/?p=1490>

<sup>3</sup> Դավթյան Մ., Բնապահպանության խնդիրները և ժամանակակից կրթության միտումները, Մարդ և հասարակություն, Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 3/60/ 2015, էջ 3

կրթության մեջ: Բնապահպանական կրթությունը շատ երկրների կրթական համակարգերում ճանաչվեց որպես կրթության առաջնային ուղղություններից մեկը:

Բայց և այնպես, բնական համակարգերի ինտենսիվ քայքայումը իր արագությամբ մեծապես գերազանցում էր/է մարդկային հասարակության բնապահպանական վարքագծի հաստատման տենդենցներին: Այս փաստը առաջ է բերել մարդկային հասարակության առաջադեմ հատվածի մտահոգությունը Երկիր մոլորակի շարունակաբար աճող բնապահպանական խնդիրների (կլիմայի տաքացում, անտառազրկում, անապատացում, միջավայրի աղտոտում և այլն) վերաբերյալ:<sup>4</sup>

### **1.3 Բնապահպանական կրթության բովանդակությունը դպրոցում**

«Բնական գիտություններ» ուսումնական բնագավառի հիմնական նպատակը բնության երևույթները, օրինաչափություններն ու օրենքներն իմացող, ճանաչողության մեթոդներին տիրապետող և գործնականում կիրառող, բնության ներդաշնակությունը գիտակցող, գիտական աշխարհայացք ունեցող անձն ձևավորումը: Տարրական դպրոցն ավարտողը պետք է նախնական պատկերացում ունենա կենդանի և անկենդան մարմինների առանձնահատկությունների, դրանց փոխազդեցությունների, ինչպես նաև մարդու օրգանիզմի մասին: Գաղափար ունենա շարժման, փոխազդեցության, ջերմության, լույսի, ձայնի մասին, ճանաչի իր շրջապատում տարածված բույսերը և կենդանիները, տարրական գիտելիքներ ունենա մարդու և շրջական միջավայրի մասին:

Դպրոցականների էկոլոգիական կրթության հիմնական հայեցակարգային դրույթներն են.

1. Կրթության համապարփակության խնդիրը կլուծվի, եթե ստեղծվի կրթական բոլոր բնագավառները ներառող համակարգ. նրանցից յուրաքանչյուրը ներկայացվի իմացության և շրջակա միջավայրի արտացոլման լեզվով՝ հիմնված որոշակի կատեգորիանների վրա. որոնք ձևավորվում են սովյալ կրթական բնագավառի

---

<sup>4</sup> Դավթյան Մելանյա, Բնապահպանական խնդիրները և ժամանակակից կրթության միտումները, մարդ և հասարակություն, Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 3.2015, էջ 3-18:



«լեզուն». և որը իր հերթին թույլ կտա նկարագրելու առարկաները, բնության ու հասարակական երևույթները, ինչպես նաև արտաքին միջավայրի գործընթացները:

2. Կատեգորիանների համակարգի ձևավորման հետ միաժամանակ պետք է իրականացվի գործողությունների կատարման եղանակների ուսուցում:

3. Կրթության բազմակողմանիությունը ենթադրում է յուրաքանչյուր աշակերտի եզակիության պահպանման, նրա հետաքրքրությունների բավարարման, ունակությունների զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում: Այս հայեցակարգային գաղափարները դրվել են էկոլոգիական կրթության ծրագրի կառուցման հիմքում:

#### **1.4 Բնապահպանական կրթության ծրագրի կառուցման սկզբունքներն ու կառուցվածքը**

Էկոլոգիական կրթության ծրագրի հիմնական բաղադրիչները, որոնք հիմնվում են տեղեկատվական-հասկացական մոտեցման վրա, հետևյալն են՝

.շրջակա աշխարհի ճանաչումը /արտաքին աշխարհ/

.ինքնաճանաչումը /ներաշխարհը/

Այս գործընթացից յուրաքանչյուրը անցնում է մի քանի փուլ: Շրջակա միջավայրի. բնության երևույթների ճանատողության գործընթացն սկսվում է որոշակի առարկայական հասկացությունների ոլորտ նրա օբյեկտների և երևույթների փոխանցմամբ: Ընդ որում այդ գործընթացում ձևավորվում են երեխաների համեմատելու, վերլուծելու, համադրելու, դասակարգելու, ընդհանրացնելու, վերացարկելու և բարձրակարգ մտածողությանը հատուկ այլ մտավոր գործողություններ կատարելու ունակություններ:

Հաջորդ փուլը հասկացությունների կարգադասության իրականացումն է, որի արդյունքում ձևավորվում են այն անհրաժեշտ հասկացությունները, որոնք իրենց հերթին բազմակողմանի էկոլոգիական գիտելիքների հիմք են դառնում:

Չուզահեռաբար էկոլոգիական կրթության բովանդակության յուրացման հետ միաժամանակ, շարունակվում է սովորողների էկոլոգիական գործունեության և էկոլոգիական վարքի ձևավորմանը նպաստակաուղղված աշխատանքը: Դրանցից մենք կարևորում ենք ալգորիթմացումը, մոդելավորումը, ներդասարանային

տարբերակված ուսուցումը, ինչպես նաև մոդուլներով ուսուցումը: Այս բազմաբնույթ գործընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձնել սովորողների էկոլոգիական գիտակցության ձևավորմանը, որն իրականացվում է մի քանի փուլով՝ որոշակի գործընթացներից ընթանալով դեպի էկոլոգիական մտածողություն, ընկալում, երևակայություն և այլն, դեպի բնաճանաչողական հետաքրքրություններ, բնապահպանական, վերարտադրողական ակտիվություն, ապա էկոլոգիական մշակույթի մակարդակի ախտորոշում և զարգացում:<sup>5</sup>

Էկոլոգիական դաստիարակության նպատակի որոշման հարցում առկա են տարբեր տեսակետներ: Որոշ գիտնականներ էկոլոգիական դաստիարակության նպատակը տեսնում են անձի էկոլոգիական կուլտուրայի ձևավորման մեջ: Ոմանք, այն նեղացնելով, հանգեցնում են անձի էկոլոգիական գիտակցության ձևավորմանը: Որոշ հետազոտողներ էկոլոգիական դաստիարակության նպատակը տեսնում են բնության նկատմամբ պատասխանատվության ձևավորման մեջ:

Ուրիշները

նույնացնում են էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակները:<sup>6</sup>

Էկոլոգիայի դասընթացը

հետաքրքրաշարժ աշխույժ մեթոդների և դիդակտիկ ու շարժուն խաղային ձևերով երեխաներին կտա այն հարցերի պատասխանները իմանալու հնարավորություն, որոնք բխում են այսօրվա էկոլոգիական իրավիճակից: Փորձը ցույց է տվել, որ երեխաներն այսօր առավել դյուրությամբ են յուրացնում էկոլոգիայի կատեգորիալ կազմը և արագ կողմնորոշվում են մոդելավորող էկոլոգիական իրավիճակներում:

Դպրոցականների էկոլոգիական կրթության նպատակը էկոլոգիական մտածողության սկզբնական տարրական հենքի ձևավորումն է, որը որոշակի պարզ գիտելիքների բնության օրենքների, էկոլոգիական հասկացությունների, բնության մեջ իր տեղի գիտակցման, բնության նկատմամբ պատասխանատվության նորմերի յուրացման, էկոլոգիական մշակույթի, էկոլոգիական գործունեության հմտությունների ձևավորման գործընթաց է:

<sup>5</sup> Ասատրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան 2006, էջ 148

<sup>6</sup> Աջամոլյան Ա., Էկոլոգիական հանրակրթության հիմնախնդիրները, Երևան 2004, էջ 10

Դպրոցում էկոլոգիական կրթության խնդիրներն են՝

1. Ուսուցման ոլորտում՝ սովորողների ծանոթացում էկոլոգիական գիտելիքների հիմունքներին, սկզբնական էկոլոգիական հասկացությունների յուրացում,

2.Դրդապատճառային ոլորտում՝ էկոլոգիա առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրություն էկոլոգիական գիտելիքների պահանջմունքների զարգացում:

Էկոլոգիական կրթության կարևորագույն սկզբունքներն են՝

1.Հաջորդականությունը բնության աշխարհի. մարդու աշխարհի, էկոլոգիական պարզագույն հասկացությունների վերաբերյալ. գիտելիքներից շարժում դեպի ավելի բարդը, ավելի ընդարձակը,

2.Ինտեգրացիան՝ էկոլոգիական տարրական գիտելիքների համադրում այլ առարկաների գիտելիքներին /մաթեմատիկա, կերպարվեստ, մայրենի և այլն/

3.ընդհատությունը՝ էկոլոգիական կրթության համակարգի ընդգրկում ուսուցման բոլոր մակարդակներում՝ սկսած նախադպրոցական հաստատությունից:

Սովորողների նախկինում ունեցած գիտելիքների և փորձի հաշվառմամբ մշակվում է ուսումնական ծրագիր: Այդ ծրագրի համաձայն տարրական դասարաններում ընդհանուր էկոլոգիական կրթության շրջանակներում շեշտը պետք է դրվի էկոլոգիական գործընթացների և երևույթների հետ կապված տարրական հասկացությունների ձևավորման վրա: Երեխաները սովորում են բնության մեջ վարքի տարրական կանոններ: Դասերի ժամանակ տարվող աշխատանքը իր արտացոլումն է գտնում արտաուսումնական միջոցառումներում բնական նյութերիցձեռքի աշխատանքների, բնության մասին նկարների, գրավոր ստեղծագործությունների մրցույթներ, զարնան, աշնան, ձմռան, ամռան, բերքի, ծաղկի տոներ և այլն: Այսինքն անհրաժեշտ է, որքան հնարավոր է, դասերին անցկացնել բնության գրկում: Այդ պարագայում դրանք ցուցադրական-որոնողական բնույթ կկրեն: Երեխաները սովորում են գեղեցիկը տեսնել իրենց շրջապատող կյանքում գեղեցիկ բույսեր, կանաչ դաշտեր, հրաշագեղ լճակներ, բազմադեմ, գունազեղ ամպեր երկնքում: Սակայն նրանց ոչ միայն հարկավոր է տեսնել դրանք, այլև ցույց տալ իրենց վերաբերմունքը դրանց նկատմամբ որպես բնության հետ հաղորդակցվելու ինչ-որ արդյունք հարցեր տալ, նկարել, նկարագրել:

Կրտսեր դպրոցական տարիքն ուսումնական գործունեության ամենաակտիվ

շրջանն է: Միաժամանակ կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեությանը հատուկ են մի շարք հակասություններ: Օրինակ՝ նրանց ծավալած ուսումնական գործունեությունը իր բովանդակությամբ ու իրականացման ձևով լինելով հասարակական, միաժամանակ անհատական է ըստ արդյունքի, քանի որ, ըստ էության, դպրոցականի կողմից յուրացված գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, գործողության եղանակներն առանձին աշակերտի ձեռքբերումներն են, և մանկավարժից մեծագույն վարպետություն է պահանջվում դպրոցականներին հանրագուտ աշխատանքում դրանք կիրառելու գործունեության մղելու հարցում:

Երկրորդ՝ ուսումնական գործունեությունը պահանջում է, որ դպրոցականը պարտադիր կարգով կատարի բոլորի համար միատեսակ կանոնների մի շարք, որոնց ենթակա է նրա վարքը դպրոցում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում: Դրանք կրտսեր դպրոցականի մեջ ձևավորվող հոգեկան նորագոյացություններն են:

Երրորդ՝ դպրոց ընդունվելու պես դպրոցականն սկսում է գիտության համակարգված կամ բուն գիտության ուսումնասիրությունը, նրա մեջ ձևավորվում է գիտական հասկացությունների համակարգը, որը այլևս չի համապատասխանում նրա նախկինում ունեցած կենցաղային պատկերացումների ամբողջությանը: Օրինակ՝ չորրորդ դասարանում «Բնություն» դասընթացն ուսումնասիրելիս երեխաները համակարգված հաջորդականությամբ ծանոթանում են «բնական միջավայր», «արեգակնային համակարգ», «Երկիր մոլորակ», «մայրցամաքներ» և այլ հասկացություններին: Այս հասկացությունների համակարգն այնպես է կառուցված, որ մի հասկացությունը մտնում է մյուսի մեջ՝ որպես ենթակարգվող: Չորրորդ՝ երեխան պետք է փոխի իրեն դաստիարակող չափահասների հետ ունեցած հարաբերությունների համակարգը, որը դպրոց մտնելու առաջին իսկ օրից սկսած, անմիջականից դառնում է միջնորդավորված, այսինքն՝ ուսուցիչն աշակերտների հետ և աշակերտներն ուսուցչի հետ հաղորդակցվելու համար պետք է տիրապետեն միջոցառումների նոր, հատուկ համակարգի:

Խոսելով էկոլոգիական կրթության բնագավառում միջառարկայական կապերի դեր ու նշանակության մասին Ի. Դ. Զվերևը նշում է, որ այդ կապերը ամենից առաջ պայմանավորվում են կրթության ողջ կառուցվածքի ամբողջականությունը նրա բաղադրիչները հանդիսացող բնագիտական, հասարակական, պատմական,

հումանիտար գեղագիտական ուսումնական առարկաների շարքերով: Միջառարկայական կապերի դասակարգումը մեծ հնարավորություն է ընձեռում կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության դաստիարակության խնդիրների լուծման գործընթացում նրանցից յուրաքանչյուր խմբի նշանակությունը հստակեցնելու հարցում:

Էկոլոգիական կրթության ծրագրի հիմնական բաղադրիչները, որոնք հիմնվում են տեղեկատվական-հասկացական մոտեցման վրա, հետևյալն են՝

1. շրջակա աշխարհի ճանաչումը /արտաքին աշխարհ/

2. ինքնաճանաչումը /ներաշխարհը/

Այս գործընթացից յուրաքանչյուրը անցնում է մի քանի փուլ: Շրջակա միջավայրի բնության երևույթների ճանաչողության գործընթացում ձևավորվում են երեխաների համեմատելու, վերլուծելու, համադրելու, դասակարգելու, ընդհանրացնելու, վերացարկելու և բարձրակարգ մտածողությանը հատուկ այլ մտավոր գործողություններ կատարելու ունակություններ: Զուգահեռաբար էկոլոգիական կրթության բովանդակության յուրացման հետ միաժամանակ, շարունակվում է սովորողների էկոլոգիական գործունեության և էկոլոգիական վարքի ձևավորմանը նպաստակաուղղված աշխատանքը: Այս բազմաբնույթ գործընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձնել սովորողների էկոլոգիական գիտակցության ձևավորմանը, որն իրականացվում է մի քանի փուլով՝ էկոլոգիական մտածողություն, ընկալում, երևակայություն և այլն, դեպի բնաճանաչողական հետաքրքրություններ, բնապահպանական, վերարտադրողական ակտիվություն, ապա էկոլոգիական մշակույթի մակարդակի ախտորոշում և զարգացում:<sup>7</sup>

Էկոլոգիական կրթության հարցադրումների և խնդիրների լուծման, դաստիարակության, անձի զարգացման և անհատների, խմբերի և մասայական աշխատանքների, անհատական և կոլեկտիվ ստեղծագործության, ուսուցչի և սովորողի համատեղ ստեղծագործական համակարգված մոտեցում է առաջարկվում:<sup>8</sup>

Միևնույն թեման ուսումնասիրվում է տարբեր տեսանկյուններից, միաժամանակ տարբեր առարկաների ուսուցիչների օգնությամբ, հաճախ՝ նույն դասաժամի

<sup>7</sup> Մաստրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան 2006, էջ 148

<sup>8</sup> <https://martamara86.wordpress.com/>

ընթացքում: Արդյունքում սովորողը ամբողջական պատկերացում է ստանում տվյալ թեմայից:

Սովորողները տիրապետելով ՏՀՏ-ներին՝ դասապրոցեսում և գնահատման ժամանակ կիրառում են և համակարգիչը, և թվային ֆոտոխցիկը, և թվային ձայնագրիչը, և էլեկտրոնային գրատախտակը:

Բնապահպանության վերաբերյալ հարցումներ անցկացվեցին Երևանի թիվ 179 հիմնական դպրոցում 5-6-րդ դասարաններում: Աշակերտներին ուղղվեցին հետևյալ հարցերը.

1. Ինչքանո՞վ եք կարևորում բնության պահպանությունը:

- Կարևոր չէ
- Շատ կարևոր է
- Կարևոր է

2. Ի՞նչ կանեիք, որպեսզի պաշտպանեիք բնությունը:

-----

3. Ի՞նչ միջոցներով է կազմակերպվում բնապահպանական դաստիարակությունը դպրոցում:

- Հաճախակի կազմակերպվում է ծառատունկ
- Կատարվում է շրջապատի մաքրում
- Կատարվում է թափոնների հավաքում
- Բոլորը միասին

Առաջին հարցին, թե ինչքանո՞վ եք կարևորում բնության պահպանությունը, աշակերտների մեծամասնությունը պատասխանել է «շատ կարևոր է»: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ներկայիս սերունդը գիտակցում է բնության պահպանության անհրաժեշտությունը: Ինչը շատ գովելի է:

Երկրորդ հարցի վերաբերյալ տրվել է տարբեր պատասխաններ: Առավել հաճախ հնչել են՝ կկազմակերպեինք ծառատունկ, հաճախակի կկատարեինք շաբաթօրյակ և կմաքրեինք մեր շրջապատը, կհետևեինք որ աղբը չթափեն փողոցներում, չկոտրեն ծառերի ճյուղերը և այլն:

Երրորդ հարցին աշակերտների մեծամասնությունը տվել է տվել է «բոլորը

միասին» պատասխանը:

Այսօր կարևորվում է բնապահպանական գիտելիքներով, երկրի պահպանությամբ մտահոգված, նոր մտածելակերպով մարդու կայացման խնդիրը: Երկիր մոլորակը պահպանելու խնդիրը պետք է լինի ապրելակերպ, մտածելակերպ:

## **Եզրակացություն**

Ասյալիսով, բնապահպանական դաստիարակությունը և կրթությունը, գիտելիքների ստացումը, բնապահպանական մտածելակերպի, աշխարհայացքի ձևավորումը սկսվում է դպրոցից:

Սովորողը պետք է իմանա բնական պաշարների, դրանց անխնա օգտագործման վնասի մասին: Գաղափար ունենա բնական միջավայրի աղտոտման աղբյուրների, քիմիական արտադրությունների վնասակար ազդեցությունների մասին:

Էկոլոգիական կրթությունը և էկոլոգիական մշակույթի դեռահասների դաստիարակությունը հասարակության առջև կանգնած գլխավոր խնդիրներից մեկն է: Որպեսզի խուսափենք էկոլոգիայի վրա անցանկալի ազդեցություններից, որպեսզի չարվեն էկոլոգիական սխալներ, որոնք վտանգավոր լինեն առողջության և կյանքի համար, ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական էկոլոգիական գիտելիքներով և նոր էկոլոգիական մտածողությամբ:

Էկոլոգիական շատ խնդիրներ հասկանալու և դրանց լուծումները առաջարկելու համար կարևոր է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության իմացությունը, իսկ ՏՀՏ միջոցների կիրառման շնորհիվ սովորողը ստանում է տեղեկատվություն, ձեռք է բերում գիտելիքներ և հմտություններ, որոնք նա կարող է կիրառել էկոլոգիական նոր ուսումնական նյութեր պատրաստելիս:

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության ինելամիտ օգտագործումն ու պահպանումը: Բնությունը թեպետ ինքնավերականգնման հատկություն ունի, սակայն այն վերականգնելու և հասցված

վնասները վերացնելու համար շատ ջանքեր են հարկավոր, և մարդը նույնպես պետք է դրան նպաստի իր ամենօրյա գործունեությամբ:

## Գրականության ցանկ

1. Ասատրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան 2006:
2. Աջամօղյան Ա., Էկոլոգիական հանրակրթության հիմնախնդիրները, Երևան 2004, 111 էջ:
3. Մելքունյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ, Երևան 2010:
4. Դավթյան Մ., Բնապահպանության խնդիրները և ժամանակակից կրթության միտումները, Մարդ և հասարակություն, Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 3/60/ 2015, էջ 3-18:
5. <https://martamara86.wordpress.com/>
6. <https://www.hamakarg.am/?p=1490>